

ՆՈՒՒՐԱԿԱՆ ՅՈՒՆԵՍԿՈՒՆԵՐ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ԱՓԵՐՈՒՆ

ՅԻՍՆԱՄԵԱԿ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՕԾՄԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔՊՍ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԻ ԵՒ Հ. ՊՕՂՈՍ Ծ. ՎՐԴ. ԱՆԱՆԵԱՆԻ

8 Սեպտեմբեր 1996: Տօնական օրերու մեծ հանդիսաւորութեամբ
կը հնչեն դարձեալ Ս. Ղազարու եկեղեցիին հինգ մեծ զանգերը, Վե-
նետիկի լճակէն մինչեւ Հայրենիք սփռելու զօղանջներն ուրախութեան
եւ հոգեւոր հրճուանքի:

Պատմական բազում տարեդարձներ կը յիշատակուին այսօր Ս.
Ղազարի Մէջ.

1700 – Ծնունդ Մխիթարեան Միաբանութեան, ի Կ. Պոլիս.

1702 – Փոխադրութիւն նոյնին՝ Կ. Պոլսէն Յունաստան, Մեթոն
բերդաքաղաքը (ի Մոռէա). Ազրիականի արեւելեան ափերուն, Վենե-
տիկեան Հանրապետութեան պաշտպանութեան ներքեւ.

1717 – Մուտք ի Ս. Ղազար, պետական հրովարտակով՝ սեփակա-
նութիւն Մխիթարեան Հայրերու:

1810 – Ազատագրում՝ Նափոլէոնի կայսերական վճռադրով՝ եկե-
ղեցական հաստատութիւններու բռնագրաւման ընդհանուր օրէնքէն:
Եւ ճանաչում, նոյն հրամանագրով, Ս. Ղազարու Մխիթարեան Հայ-
րերու Հայկական Ակադեմիայի:

Ուրախ են Ս. Ղազարու Հայրերը, Մայր Տաճարին մէջ այսօր հաւաքուած աղօթող ժողովուրդը եւ ուխտաւորաբար ժամանողները՝ ազգայիններ, իտալացի հայասէր բարեկամներ, Մխիթարեան նախկին աշակերտներ եւ հիւրեր: Ուրախ են մանաւանդ վանքին 17 նորընծայ ժառանգաւորները, որոնք առաջին անգամ ըլլալով կը մասնակցին այսպիսի տօնակատարութեան մը, որ այսօր բացառիկ նկարագիր է ստացեր, որովհետեւ կը տօնուի նաեւ Մխիթարեան վաստակաւոր երկու Հայրերու քահանայական ձեռնադրութեան եւ սուրբ օծման 50-ամեայ յորելեանը. ոսկեղէն յորելեան՝ Գերշ. Սրբգ. Հ. Ներսէս Արք. Սէր-Ներսէսեանի եւ իր հոգեկից դասընկեր՝ Գեր. Հ. Պօղոս Մ. Վրդ. Անանեանի:

Առաջինը շուրջ կէս դար անընդհատ նուիրուած է Ս. Ղազարու պայծառութեան, վարելով բազմաթիւ պատասխանատու պաշտօններ, որպէս Մատենադարանապետ, Ընդհանուր Քարտուղար եւ Ոորհրդական, Լուսարարապետ եւ հոսկ շուրջ հինգ տարի որպէս Ընդհ. Մեծաւոր (1986-1991): Երկար ժամանակ ձեռնհասօրէն վարած է «Բազմավէպ» հանդէսի խմբագրութիւնը, հրատարակելով բազմաթիւ հմտակից խմբագրականներ, յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, յատկապէս ի պաշտպանութիւն մեր պաշտելի «Մեծաւոր»-ին: Հ. Ներսէս, սակայն, 1950 թուականէն ասդին ծանօթ է Ս. Ղազարու սերունդներուն՝ որպէս «Հայր Վարժապետ», տիտղոս՝ որ վանքին մէջ կը տրուի գրաբարի ուսուցիչին. բայց ինք դասաւանդած է նաեւ դասական այլ լեզուներ, գրականութիւն, երգ ու երաժշտութիւն, եւ Մուրատ-Ռափայէլեանի մէջ՝ 16 տարի փրկիսփայտութեան պատմութիւն: Ներկայիս՝ հինգ տարիէ ի վեր, Առաջնորդն է Հայ Կաթողիկէ Համայնքներուն՝ Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելեան Եւրոպայի, Արքեպիսկոպոսական աստիճանով, բնակութիւնն հաստատած Գիւմրի:

Հ. Պօղոս Մ. Վրդ. Անանեան, դաստիարակ վանքին մէջ՝ բազում սերունդներու, տարիներու ընթացքին դարձած է խորհամուտ եւ հանրածանօթ բանասէր, մասնագէտ՝ ծիսական ու եկեղեցապատմական հարցերու, հեղինակ բազմաթիւ հատորներու (վերջինը՝ իններորդ դարու Հայոց Կաթողիկոս Զաքարիա Զաքեցիի անտիպ ճառերու ստուար հաւաքածոն, 1995): Ուսումնասիրած է քրիստոնէութեան թափանցումը Հայաստանի մէջ՝ առաջին երկու դարերուն, Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջ, ապա՝ ճշտած է Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը, ունի ընդարձակ մենագրութիւն մը Ս. Մեսրոպ Մաշտոցի մասին, եւն...: Ընդհ. Աբբայի պաշտօնով ղեկավարած է Մխիթարեան Միաբանութիւնը, 1970-1982 տարիներուն:

Սուրբ Պատարագի ծիսակատարման ընթացքին, զոր մատոյց Գերշ. Հ. Ներսէս Արքեպիսկոպոս, կարդացուեցաւ Հռոմի Սրբգ. Պապին կողմէ ուղարկուած շնորհաւորական ձեռագիր նամակի հայերէն թարգմանութիւնը (բնագիրը՝ լատիներէն), ուր կը յիշատակուէին Յորեւարի կեանքէն ու գործունէութենէն դուռագներ, սկսած՝ անոր մոռաքի օրէն ի Ս. Ղազար (1933), մինչեւ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու օծումը, զոր կատարած է նոյն ինքն Հռոմի Սրբգ. Հայրապետը, Ս. Պետրոսի Վատիկանեան Մայր Տաճարին մէջ, հայկական ծէսով (17 Նոյեմբեր 1992). նամակի աւարտին, որպէս երաշխիք հաճութեան՝ Սրբգ. Քահանայապետը, հայրական ջերմ մաղթանքներով՝ առաքելական իր օրհնութիւնը կը յղէր Յորեւարին եւ հանդիսութեան մասնակցող ներկաներուն:

Կէսօրին, եղբայրական սիրոյ սեղանին շուրջ հաւաքուած էին, միաբանակից բոլոր Հայրերուն հետ, բարեկամներ, նախկին սաներ, հայրենակիցներ, որոնք ծափերով ողջունեցին հասած շնորհաւորական հեռագիրներն ու նամակները. Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանէն, Հռոմի Արեւելեան Եկեղեցիներու Ժողովի Նախագահ՝ Կարդինալ Ա. Սիլվեստրինիէն, Հայաստանի ու Վրաստանի Պապական Նուիրակ՝ Գրպծ. Ժան Փօլ Կոպէլ Արքպս.էն, Առաջնորդական Փոխանորդ՝ Հ. Նշան Թ. Ծ. Վ. Գարաքեհեանէն, Ս. Ղազարի Ընդհ. Աբբահայր՝ Հ. Սահակ Վրդ. ձեմձեմեանէն, Վիեննայի քոյր Միաբանութենէն, Անարատ Յղ. Հայ Գոյրերէն (Հռոմ), «Յառաջ» օրաթերթի խմբագրութենէն (Փարիզ), Տիրամայր Հայաստանի Կուսաստանէն (Գիւմրի), Գրպծ. Եպիսկոպոսներէ (Պէյրուս, Վիեննա, Նիւ-Յորք), Սփիւռքի եւ Հայաստանի Միութարեան Կեդրոններէն (Հալէպ, Փարիզ, Պուէնոս Այրէս, Պէյրուս, Հռոմ, Պոսթոն, Երեւան), Փանիկի Ժողովրդապետ՝ Հ. Կոմիտասէն, եւ այլ բազում բարեկամներէ ու ծանօթներէ՝ Վենետիկէն, Միլանէն, Նոյնիսկ հեռաւոր Շիրակէն, Ալոցքէն, Գիւմրիէն, Փանիկէն, Երեւանէն: Յուզիչ էր ներքոյական երկարաշունչ բերթուածը, զոր Պոսթոնէն ուղարկած էր Հ. Ռաֆայէլ Վ. Անտոնեան:

Ամէնէն ետք խօսք առաւ Յորեւար Հ. Ներսէս Արքպս.ը եւ շնորհակալութեան ջերմ զգացումներ յայտնելով բոլորին, նաեւ յանուն օծակից իր դասընկերով, յիշեց իրենց դասարանի լուսահոգի դաստիարակները, որոնց մէջ՝ յատկապէս մեծ գրաբարագէտ Հ. Նղիա Վրդ. Փէչիկեանը, որուն հսկայ վաստակին ու գիտութեան մէջ փոքրիկ կայծը նկատեց ինքզինք: Յիշեց նաեւ իրենց խումբի օծակից երէց դասընկերը, նորոգ հանգուցեալ Հ. Եփրեմ Վ. Տէր-Ղազարեանը եւ անոր կրթական ու մշակութային վաստակը (բանաստեղծութիւններ,

Ֆրանսերէնէ-Հայերէն բառարան, իմաստասիրական ու հոգեբարոյական երկեր, Յուշամատեան Հալէպի Մխիթարեան Վարժարանի 50-ամեակին, եւն...):

Միաբանութեան կողմէ բոլոր ներկաներուն բաժնուեցան յիշատակի սրբազան պատկերներ, գունատիպ մեծադիր մանրանկարով էջաւորուած երկարաչունչ Զօն մը եւ «Աւետարանական իմաստութիւն» խորագրուած գրքոյկ մը, 246 էջոց, նորընտիր Աբբահօր Թարգմանութեամբ:

Գոհաբանական աղօթքով, խանդավառ միջնորդոտի մէջ հրաժեշտ առին բոլորը, երրորդ հազարամեակի յուսալիր տարիներուն հասնելու վառ իղձերով:

Վեցնետիկ – Ս. Ղազար
10 Սեպտեմբեր, 1996

Վանական